





[illegible]



Թիւններով ծածկված բողոքադրերը, բազմա-  
մարդ ժողովները հարուստներ են հասցնում  
զինուորական դասակարգի հեղինակութեան և  
պահանջում են, որ Պիկար դուրս գլխի այն  
մարդկանց ձանկերից, որոնք ոչ ոք իրաւունք են  
համարում: Ուսանողութիւնը ոգևորված ցույցեր  
է անում ի պատիւ Պիկարի, թիվ ու հայրենա-  
սէրները, որոնք մի քանի ժամանակ առաջ ամ-  
բողջ Պրանսիայի սիրելիներն էին, այժմ նախա-  
տական աղաղակներով են արժանանում: Նոյն  
խոսքով գիտնական մարդիկ, որոնք սովորաբար հե-  
պոս են մնում հասարակական հարցերից,  
այժմ ընդհանուր են իրանց խաղաղ աշխատու-  
թիւնները և հանդէս են գալիս բողոքողի, իրա-  
ւունք պահանջողի դերում:

Նոյեմբերի 19-ին Պարիզի գիտնական աշխար-  
հը իր բոլոր պատկառելի ներկայացուցիչներին  
հաւաքել էր մի մեծ ժողով, որի նախագահն էր  
Պատեմբորեան ինստիտուտի ղեկավար Ռիւլլո: Դաս-  
լիւնը լի էր արեգադր պրոֆէսորներով, բժշկներով,  
փաստաբաններով, ինժեներներով, բարձրագույն  
Սյուդետը չէր վճարում որ և է գիտնական հարց.  
հեղինակաւոր, անկողնապահ մարդիկ հաւաքվել  
էին իրանց ջաղաքարներն պարտքը կատարելու  
համար: Նախագահ Ռիւլլո ասաց. «Մի վրդովե-  
ցուցիչ անարդարութիւն հարկադրեց մեզ կտրվել  
մեր սովորական պարագլուխներէր: Մեր հա-  
մաքաղաքացիները մէկին համարեա մշտական  
տաժանակիր աշխատանք է սպասում միայն  
այն պատճառով, որ նա նպատակը ձեռնարկու-  
թիւնը մերկայանում, արդարութեան յաղթա-  
հաղթին և նա պաշտպանութիւն չէ գտնում նոյն  
խոսքով կողմից, որոնք պարտաւոր են պահ-  
պանել մեր ազատութիւնը, մեր կարծիքները  
անկախութիւնը: Մի այսպիսի բացարձակ փորձ,  
որ անվում է անձնաւորութեան ամենաարդա-  
պան իրաւունքների դէմ, զրկում է մեզ մեր աշ-  
խատութիւններով հանգիստ դրադելու կարո-  
ղութիւնից, ստեղծում է այնքան վտանգաւոր  
դրոշմներ, որ մենք չենք կարող ձեռքներս ծա-  
լած նստել և չենք կարող չը բարձրացնել մեր  
ձայնը անմեղ հայրենիքի պաշտպանութեան հա-  
մար: Անատոլ Պրանս բացականչեց. «Ես  
տանք, որ չենք ծախ մեր ձեռքերը մինչև այն  
ժամանակ, երբ դուրս կը խլենք Պիկարին զին-  
ւորական իշխանութիւնների ձեռքէր:»

Այսպէս խոսեցին նաև միւս ճառասօսները:  
Ժողովը, ի հարկէ, ամենագեղեցիկ տպաւորու-  
թիւն թողեց: Հասարակութեան այդ միասնաբա-  
ցանկութիւններին արձազանք տուեց վճա-  
րվել ատանքը, որ ճիշդպէս զինուորական  
դատարանին յետաձգել Պիկարի դրոշմ քննու-  
թիւնը մինչև որ կը վերջանայ Բրէյֆուրի  
գործը: Դա էլ մի ահալին հարուած էր, որ  
ստացաւ զինուորական բռնապետութիւնը: Պր-  
անսիան ներկայ բուռն շարժում օրինակելի,  
խրատական երկրի է: Եւ ներկայ ժամանակ մենք  
չենք կարող ցոյց տալ մարդկութեան մէջ մի այն-  
պիսի լուսաւոր, վերին աստիճանի միջնարակայն  
երևոյթ, որպիսին ցոյց է տալիս իր կեդոներ իր  
ձեռքով լուսացող, մարդկային իրաւունքների հա-  
մար այնքան գեղեցիկ կուլ սկսած Պրանսիան:

Ֆիրդուսին կարծես թէ ծիծաղում էր իր դա-  
գալից:

Երբոր օրվա երեկոն Յէտուրան հետը բե-  
րեց և իր փոքրիկ քրոջը, երկու տարեկան մի  
երեխայ Վրիկա անունով: Երբ փոքրիկը տեսաւ  
ոսկեթիւ պատանուսը դրած Ֆիրդուսու դիակը,  
ապարանջաններով զարդարած ձեռներն ու ներ-  
կած երեսը, հիացած բացականչեց. — Ախ, —  
և անկայքեց խկով. «Բիշ գեղեցիկ է»:

— Համբուրիք նրան, ասաց Յէտուրան:

— Ուրախութեամբ, պատասխանեց Վրիկան:  
Եւ այս անգամ Ֆիրդուսին, որ իր երկու շա-  
բաթեայ անմահութիւնից ձանձրացել էր, կար-  
ծես թէ իսկապէս դուարձանում լինէր:

Տարբերակ չարագործութիւնը շարունակում  
էր դեռ զբաղեցնել մարդկանց. ամեն բուռն  
յայտնում էին, թէ մարդասպանը գտնվել է և  
որ ու գիշեր ամբողջ իր յիմար հետաքրքրու-  
թեամբ զիջվում էր այն տան առաջ, ուր կա-  
տարվել էր շարագործութիւնը: Գաւառներից և  
կամ պատմաբանները մինչև թաղման օրը  
ցրվել էին զանազան զինեաներ ու զուարճատե-  
ղեր: Նրանց ամբողջ բան ու գործը զուար-  
ճութիւնն էր. մոռացել էին, թէ ինչու էին եկել  
քաղաք:

Որովմէ օրը սաստիկ տոթ կղանակ էր, դիա-  
կառը շարժվեց դէպի գերեզմանատուն: Ֆիր-  
դուսին, որպէս զի ցոյց տուած լինի իր սէրը  
դէպի ժողովուրդը, խնդրել էր իրան աղբատ-  
ների դիակառը մտնել հանդիսարան. իսկ  
հանդիսակառարները մէկի զինում միտք ծա-  
ղեց դիակառը ետևիցը որ «աղբառ» շունը  
բաց թողնել, որպէս զի ուսուցչի ցանկութիւնը

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻՍՏԻՑ

Կ. Պօլիս, Նոյեմբերի 12-ին  
Հետեւեալ յօդուածը կը քաղեմ «Courrier d'O-  
rient» թերթէն: Օսմանեան սուլթանները երբ  
վեհապետական իշխանութեան կը հասնեն, Եյու-  
թի մեղիքներն մէջ յանուն ժողովրդեան թուր կա-  
պելու արարողութիւն մը ունին, որ, ընտրա-  
կան սկզբանց մէջ, պարբերական նուիրագոր-  
ծումն է իրենց իշխանութեան: Վեհապետական  
այդ իշխանութիւնը, թէպէտ ժառանգական,  
սակայն սուլթանները յարգելով նաև ժողովրդա-  
կան իրաւունքը, վերոյիշեալ հանդիսաւոր արա-  
րողութեանը կը համակերպին:

Սուլթանը օսմանեան խալիֆները, հայրա-  
բար կը կառավարին իրենց ժողովուրդը, իսկ-  
յառուտ կը լինէին անոնց ամեն փափաքներուն  
և, առ այն, ճշմարիտ ընտրութիւններ կը կատա-  
րէին: Ժամանակ անցնելով, սուլթանութիւնն  
ինքնիշխան եղաւ, բայց սուլթաններն ալ, Բայ-  
ազիդի, Մուսամմէդի, Սէլիմի, Սուլէյմանի և  
Մահմուդի պէս անձնաւորութիւններն էին, ո-  
րոնց իշխանութեան միապետական հանդեման-  
քը լոկ տեսական էր: Վասն զի սուլթաններուն  
չորքն անպիսի բարձր անձնաւորութիւններ  
էին, առ այն, ճշմարիտ իտրոնիզմներուն կը  
հետեւէին և կ'օգտուէին անոնց հայրենասիրական  
զգացումներէն ու հմտութիւնէն: Այս ընթացքով  
էր, որ օսմանեան պետութիւնն ամենամեծ յաղ-  
թանակներ տարաւ, պարսից ծոցէն սկսեալ  
մինչև Ալբանիան ափունքը տարածեց իր իշխա-  
նութիւնը, տիրեց աֆրիկեան եղբերներուն,  
Միջերկրականի կղզիներուն և ընդարձակուե-  
ցաւ մինչև Մոլտավիոյ Պոռթ գետին սահման-  
ները: Վիեննայի պարկապուտներն ներքև կրած  
սուկալի հարուածէն և ընդդէմ Ռուսիոյ ու Բո-  
նապարտի աղետալի պատերազմներէն յետոյ իսկ  
Թիւրքիան միշտ ակնածելի եղաւ:

Օսմանեան երեւելի վեհապետներուն այս ըն-  
թացքին հետեւեալն նաև, մինչև մեր օրերը,  
սուլթան Մէջիդ, սուլթան Ալիդ և սուլթան  
Մուրադ: Ասոնք ալ կ'ընդունէին Բ. Գրան օգ-  
տակար դատած հակալուծութիւնն ու Ռայիդ,  
Ալի, Ֆուադ, Մէհմէդ Բուզի, Հիւսէյն Ալի  
և Միդատ փաշաներու նման անձնաւորութեանց  
օրինաւոր հեղինակութիւնը:

Ամեն ոք գիտէ, թէ պետութեան ներքին և  
արտաքին բոլոր մեծամեծ գործերը այդ անձ-  
նաւորութեանց բանակցութեամբն ու գործակ-  
ցութեամբը կը կատարուէին: Այդ անձնաւորու-  
թիւնները եւրոպական խորհրդարաններու մէջ,  
չնտ փառաւոր կը ներկայացնէին իրենց վեհա-  
պետը: Ասկից շատ, անոնց դիրքն ու ազդեցու-  
թիւնը շատ ընչ անգամ խորձարելի առարկայ  
կը լինէին իրենց վեհապետին, այնպէս որ՝ ա-  
ռաջին քարտուղար և առաջին սենեկապետի  
նման պալատական զեւար օր պաշտօնեաները  
Բ. Գրան կընտրուէին և Բ. Գրան կողմէն  
պաշտօնանկ կը լինէին, եթէ զգոհութիւն պատ-  
ճառէին: Այս առթիւ կը յիշեմ, որ սուլթան  
Մուրադ, երբ իր մտերմներէն մէկն ուղեց ի-  
րեն առաջին քարտուղար կարգել, մեծ-եղար-

անել լաւ արտայայտված լինի: Բաղդադի կեն-  
դանաբանական պարտէզը մի գաժփա էր յատ-  
կաբեղ այդ նշաւատակով, բայց որովհետև ան-  
ու չը ձանձրանան, զիմեջ էին այդ սրամիտ  
միջոցին, ուղարկելով իբրև ներկայացուցիչներ  
իրանց արձանները:

Ժողովուրդը ոչինչ չէր նկատում, որովհետև  
ոչ ոք ուղարկութիւն չէր դարձնում այդ սակա-  
ւաթին հանդէսի վրա, իսկ տասնէնչորս բանաս-  
տեղծները ոչ մէկն էլ ներկայ չէր:

Երբ հանդէսը, որ ամեն փողոցի անկիւնում  
փոքրանում էր, հասաւ Ալի-Մարտիլի գերեզմա-  
նին, դեռ ոչինչ պատրաստված չէր: Բանտրե-  
րից մէկը ընած էր, իսկ միւսները գնացել էին  
ծարաւ կոտորելու:

Զօրան զողեց ընածին ասելով.  
— Ի՞նչ ամօթ ու խայտառակութիւն. դէ,  
առաջ, եղբայր, կանչիւր ընկերներեցդ մէկին էլ  
և մի փոքրիկ գերեզման փորեցէք տիրոջ հա-  
մար—անս այն արմաւենու տակ, հօ դիակը մէկ  
էլ յետ չը պիտի տանեն:

Յիտուն ճառախօսները ներկայ էին տաւ.  
նրանք կարողային իրանց ճառերը և վերջացնե-  
լուց ու քրտնալք սրբելուց յետոյ մէկը միւսի  
ետևից խոսին անյայտացան: Տարեբերողը մի  
փոքրիկ ձերուկ, որը միակն էր մնացել զինու-  
րականի, երկու կանանց ու մոմարձանների  
կառնի հետ, սկսեց կարգալ իր ձեռագիրը: Նա  
ասաց. «Ում շնորհիւ է ժողովիւն այս ահալին  
բազմութիւնը, իմ պատուին են կատարվում  
հանդիսականներն այս անկերը ոգևորեցուցիչ  
յարգանքները»:  
Բարի մարդ, որ բաւական անշնչան մի անձ-

գոյր հարկադրեց սուլթանն, որ Սաադուլլահ  
փաշան ընդունի, և մահ բուն այս պատճառա-  
ւոր, որ այդ տարբարող պաշտօնատարը, Մու-  
րադին իբրև մտերմ, կասկածի ենթարկուելով,  
Պօլսէն վտարուեցաւ իբրև Բերլինի դեսպան և  
յետոյ նոյն պաշտօնով Վիեննա ղրկուեցաւ, ուր  
16 տարի մնալով, երբ Պօլսոյ մէջ իր կնոջ և  
աղջկան հիւանդութեանց պատճառաւ մայրաքա-  
ղաք դառնալու համար արտօնութիւն խնդրեց,  
բողոքովին մերժուեցաւ, որուն վրայ յուսահա-  
տելով անձնասպան եղաւ:

Սուլթան Համիդ II, իր փառաւոր նախնեաց  
չքեղ սովորութիւնները մէկ կողմ թողնելով, բոլոր-  
ովին ջնջեց այդ դարաւոր աւանդութիւնները  
և ամեն իշխանութիւնը իր իրաւունքէն մէկ կեղ-  
րոնացուց, յետ այն փառաւոր խոստման, զոր  
բրաւ կայսերական խաթմով (հրովարտակ)  
անխախտ պահպանելու և յարգելու իր նախ-  
նեաց աւանդական սովորութիւնները: Արդ,  
ի նկատի ունենալով ասկից 5 դար առաջ, և  
հիմա 20 տարի է ի վեր ընդունուած քաղաքա-  
կանութեան շնորհիւ յառաջ եկած հետեւանքները,  
ակներև կը տեսնենք, որ օսմանեան պետու-  
թիւնը, այս 20 տարուան մէջ, ձեռք է հանեց  
Բուլղարիան, Դոբրուշան, Արևելեան Ռումելիան,  
Բոսնիան, Հելլէզպոլիսը, Սերբիոյ և Սեւա-Լե-  
ռան յարակից երկրները, Քիսովան, Վալու-  
սը, Բաթումը, Վարսը, Նիկիտասը, Փոնտուքը,  
Կրետէն, և այլն, և այլն...:

Յաւալին այն է, որ սոյն չարաղէտ դէպե-  
րուն բոլոր պատասխանատուութիւնը միմիայն  
Համիդի զիւտուն վրայ կը ծանրանայ, այն ժա-  
մանակէն ի վեր, յորմէ հետէ ամեն իշխանու-  
թիւն իր ձեռքերուն մէջ առաւ, բացի այն սիս-  
տեմատիկական գործերէն, որ Բ. Գրան կը  
պատկանէին:

Անս այս է ամեն ողջախոս և անկողնակալ  
անձանց կարծիքն և այս պիտի լինի պատմու-  
թեան վերջը: Չեմք կարող ըմբռնել, թէ սուլ-  
թանն ինչպէս չի սուկար այսպիսի պատասխա-  
նատուութեան մը հետեւանքներէն: Յայտնի է,  
որ կերպով մը ինքն ալ ջանաց այդ պատասխա-  
նատուութեան աղատ թողուլ բոլոր նախարար-  
ներն, և ինչպէս կարելի էր երկրին այս ողոր-  
մելի վիճակին պատճառ բռնել Սայիդ, Քիսովի  
փաշաներն և ուրիշներ, որոնք դուրս հանուե-  
ցան միմիայն Բ. Գրան անկեալ իշխանութիւ-  
նը կենդանացնել ջանախոն համար:

Բայց եթէ Թիւրքիոյ վիճակը, հակառակ խեղ-  
մը խաբուսիկ ապահովութեանց, օրէ օր ծանր  
կերպարանք մը կը ստանայ, որ մ'ալ այնպիսի  
կրակ չը պիտի բորբոքի, որ ամեն բան պիտի  
այրէ ու ըմբռնէ: Եւրոպայի կը մնայ, այնպիսի  
մասնաւոր միջոցներ ձեռք առնել, որ այդ սոս-  
կալի պատահականութեանց առաջին առնուի  
և այս ողորմելի վիճակի պատասխանատուն,  
իրեն ամբարաններէ, ձեռք բաշէ գործէն:

Շիտաւոր խօսելով, այս բանը՝ Նիկիտասի պէս  
փոքրիկ տեղ մը, լաւ յաջողուցին:

Գրուկ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Մենք յայտնեցինք, որ լորդ Կիտլենդը,  
կամենալով կրթական մի բարձր հաստատու-  
թիւն հիմնել Թարուսում Գորգոնի անունով,  
բացել է հասարակական հանդանակութիւն:  
Լօնդօնի լրագիրները հաղորդում են, որ երկու  
օրվայ մէջ հաւաքվեց 80,000 ֆունտ ստերլինգ:

— Կաթոլիկներին արեւելքում պաշտպանելու  
խնդիրը, ինչպէս հաղորդում է «Berliner Tage-  
blatt» լրագիրը, շուտով լուծուած կը ստանայ:  
Վատրիկանն աշխատում է մի կերպ համաձայ-  
նութիւն կայացնել Գերմանիայի և Ֆրանսիայի  
մէջ. Ֆրանսիան պէտք է պաշտպանի միջադ-  
րային խառն կաթոլիկական հաստատութիւննե-  
րը, իսկ Գերմանիան՝ դուռ գերմանական-կա-  
թոլիկ հաստատութիւնները: Լրագրի ասելով,  
Բրիտանի անցեալ միլիտարութիւնը իբր թէ  
համաձայնութիւն է տուել այդ որոշման:

— «Daily News» լրագիրը բողոքովին հաստատ  
աղբիւրից հաղորդում է, որ Հոսով կոնֆերեն-  
ցիան մերժել է անիշխանականներին արտօնելու  
առաջարկութիւնը: «Polit. Corr.» լրագրին հա-  
ղորդում են Պետերբուրգից, որ ռուսաց պաշ-  
տօնական շրջաններում շատ զգոհ են միլիտար-  
նական հիւսիսի քաղաքական այն ձգտում-  
ներից, որ նա բացառիկ պարզամտութեամբ ան-  
իշխանականութեան դէմ դուստրված կոնֆե-  
րենցիայի հարցի առթիւ: Այն ոճը, որ գործ  
ածեց Դիպլիւի այդ գործում, ռուսաց զիւլո-  
մատիայի կարծիքով, կարող է աւելի խրախու-  
սել, քան վարկեցնել յեղափոխական տարրերը:  
Այսպիսի վարժանքն անհանդ պատրուկին  
կարող է գործել Եւրոպայի պահպանողական  
տարրերի վրա և անվտանգութիւն առաջ բերել  
դէպի Ֆրանսիան:

— Շանհայից հեռագրում են «Daily Chronicle»  
լրագրին, որ զիւլոմատիկական շրջաններում  
հնարաւոր են համարում Պեկինի դրամուր օ-  
տար պետութիւնները զօրեղով անգլիական  
շահերը պաշտպանելու համար: Ֆրանսիական  
նաւերն արդէն այնտեղ են:

— «Բուլղարեան» գաղտնի աղբանական կո-  
միտէն ուղարկել է սուլթանին մի յիշատակա-  
գիր, պահանջելով, որ Սլաւոնիային անկախու-  
թիւն տրվի, որ աղանական զարդները բացվին  
և աղանական լեզուն պաշտօնական լեզու ճա-  
նաչվի: Մի ուրիշ կոմիտէն «Ազգային» աղա-  
նական-մալիցիոնական դաշնակցութիւն» անու-  
նով, մեծ եռանդով պրօկլամացիաներ է տարա-  
ծում Մակեդոնիայում և հին Սերբիայում, կոչե-  
լով աղաքանակութիւնը դէմքի, եթէ Թիւրքիան  
անկախութիւն չը տայ այդ երկրներին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ԵԱՍԱ, 28 Նոյեմբերի: Նոյեմբերի 27-ին,  
«Прѣвѣ» զինուորական շղեռնով Լիվադիայից  
Կ. Պօլս ուղարկվեցին երկու ձի, որոնք նշա-  
նակված են ընծայ սուլթանին Թագաւոր Վայսը:

ԿԱՋԱՆ, 28 Նոյեմբերի: Երեք օր շարունակվող  
ցրտերից յետոյ, սկսվեց ձիւնը հալվել. անձրև  
է գալիս: Ճանապարհները վատութիւնը վնա-  
սում է առևտրին:

Կ. ՊՕԼԻՍ, 28 Նոյեմբերի: Բ. Գրանը զիմեց  
չորս պետութիւնների դեսպաններին մի յայտա-  
գրով, որի մէջ յայտնում է, որ ինքն ի նկա-  
տի առաւ պետութիւնների խոստմունքը, թէ

նաւորութիւն էր, մեծ ճառ էր պատրաստել,  
այնպէս որ երկու բանտրները, որոնք անհա-  
մբ սպասում էին գերեզմանը ծածկելուն, բար-  
կացած միջնորդում էին: Մերուկը, սարսափած  
հրաժարվեց ճառի վերջաբանը արտասանելուց:

Զօրան թափում էր աղի արցունքներ, Յէ-  
տուրան հեկեկում էր:

Թագաւորի սպան մօտեցաւ սիրուն աղջկան,  
ասելով.

— Երևի Ֆիրդուսու աղգականներէն են, սի-  
րունիկ:

— Այ, պարոն, ես նրա դրացին եմ և վերջին  
երեք զիշերները հսկում էի նրա դիակի վրա:

— Այո, դա ինձ չէ զարմացնում, դու սիրուն  
ես, ուրեմն պիտի բարի լինես... բայց խնդրում  
եմ էլ մի լաւ և մի փաշայիւր այդ սիրուն  
աղբերդ...

Սպան շարունակում էր այսպէս խօսել, յետոյ  
նա լեզվեց դէպի Յէտուրան ու համբուրեց  
նրա ոսկեգոյն մաղբը:

Աղջկը փոքր և մի փոքր թուրք լացը, սրբ-  
եց իր աչքերը, առաւ սիրուն սպայի ձեռք և  
երկունս էլ ուղեղովեցին դէպի քաղաք:

Նոյն օրվային, երբ նրանք անցնում էին Բադ-  
դադի մեծ դարբասով, թռչնակի կլկլեցի նման  
հնչում էր Յէտուրայի ծիծաղը, և Ֆիրդուսին  
անմահութեան իր դահլից, իմաստութեամբ և  
բարութեամբ լի, հետևում էր բարեխիտ հայ-  
եացքով սիրահարված զոյգին...

Միակ պառաւ աղախինն էր, որ չըբած գե-  
րեզմանի առաջ դեռ շարունակ ողբում էր Ֆիր-  
դուսու մահը:

Սուրէն Աղամեանց



Типографія Грузинск. Издат. Т—ва, Лорисъ-Мелик. ул. № 13.